այդ աշխարհի վրայից չէին կարող եղծել:

Թաթարները, քրդերը խաչարձանների պատուանդանը փորում են նաև գանձ գտնելու յուսով: Նոցա այդ սովորութեանն եմ պարտական մի պատմական աւանդութեան գիւտը: Խարաբայ խաչի և Զեյվայ գիւղերի արանքը, Ցաճկա-պարսակական տրբանսպորտնի ճանապարհի վէրայ, Կուսանաց դեռի աջ ափին մի տեսակ առանձնացած ժայռ է ցցված: Թաթար առաջնորդս ցոյց տուեց ինձ նորա վերայ փորված, երկու իրար հագցրած թղաչափ խաչեր, որոնք հնութիւնից հաղիւ նշմարվում էին. նրա կողքին դռան կամրջակի նման մի նշան էր փորված, որի աջ վերջաւորութիւնը թեքված էր հորիզոնաբար: Նորա տակին թաթարները փորել էին հինգ կանգնաչափ: Փորուածքումը նկատվում էր ածուխ և ամանեղէնների կտորները: «Ի՞նչ կա այստեղ», հարցրի թաթար առաջնորդիս:—«Այս քարի տակին մի մեծ քարայր կայ, որի մէջ պահուած է մի ամբողջ քաղաքի հարստութիւն», պատասխանեց նա:

«Բայց քեզ ինչից է յայտնի», կրկնեցի ես:

—«Աւանդութեամբ պատմում են»—շարունակեց առաջնորդս—«որ հին ժամանակում հայոց թագաւորը, այստեղ, նա ցոյց տուեց Կուսանանց դեռի ձախ ափը, մի քաղաք է շինել, յատկապէս քաջ տղամարդոց համար, բայց հայոց թոռունները (աղնուականները), նախանձելով նորա մեծա-